

1843 ԲԱՋԱՍԻՐԱԿԱՆ 1914


✻ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՄԵՍՈՒՎԱԾ ՎԱՐՈՒՑ

ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՑ ԳԻՏՏԻՆ *



ԱՅՆ մեծ մարդու վարքը, որուն ճակատագրուած էր մտքի և գրչի աշխարհակալութեամբ՝ կերպարանափոխել Ասքանազեան ազգին և Հայաստան աշխարհի ոգին և սիրտն, և ապահովել նորա կեանքն ժամանակի հարուածներու դէմ, պահպանել նորա գոյութիւնն ապագայ դարերում, զրած է կորին, Մեծ Ուսուցչի կրտսերագոյն աշակերտնեւ ըից մին, զոր Ղազար կոչէ «այդ ցանկալի»։ Կորեան հակիրճ պատմութեան մէջ ամփոփուած է ութսուն և թերեւ աւելի ձիգ տարիներու բեղմնաւոր և ստեղծագործ կեանք մի։ Այդ կենսագրականն յոյժ համառօտիւ կ'անցնի Սրբոյն ծննդենէն՝ մինչև աշխարհէ հրաժարիլն, նորա քաղաքական պատկերն ուրուագծուած է մի քանի բառերու մէջ՝, իսկ համեմատաբար աւելի երկար կը զբաղի նորա հոգեւոր և առանձնական կեանքի, զրոց զիտի և անոր տարածման գործողութեանց նկարագրութիւններով։

Թէպէտ և այս մասամբ ևս, կարելի է ասել, որ շատ փափաքելու բաներ անտեսուած են. վաթսունէն աւելի երկարողի, ուշիմ և փափ-

* Տես Բազմավէպ 1913 թիւ 11-12 (Հայկական Յոբելէան) էջ 122։

1. Էր որդի ան երանելոյ վարդան կոչեցելոյ... կոր. էջ 6։

2. Տեղեկացեալ և հմտօն եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուորական առնական իւրոց զօրականացն... Անդ։

կաձայն աշակերտներին դեռ աւելին կարելի էր յուսաւ. բայց ի զուր, տակաւին երկար դարերու մթութեան քօղն կու ծածկէ սքանչելի մարդուն վառարանն, ուստի ծագեցաւ մեզի «Նորոգատուր աստուածեղէն շնորհ և լուսաւոր վարդապետութիւն և հրեշտակաբար կրօնիցն առաքինութիւն»¹։ Մեր առաջադրած ուսումնասիրութեան մէջ չենք ծրարած կորեան ամբողջական պատմութիւնն քննութեան ենթարկել, այլ մեր բանախօսութեան նիւթ վերցուցեր ենք միայն սկզբի հինգ կամ վեց տողերն, յորում յիշատակուին Մաշտոցի գաւառն՝ Տարօն, գիւղն՝ Հացեկաց, և հօր անունն՝ Վարդան²։

Այս թանկագին բառերու առաջնորդութեամբ, տալով մի նոր լուսաբանութիւն, պիտի փորձենք նշոյլ մի սփռել թանձրամած խաւարի մէջ, և ցուցանել եթէ հնար լինի, պատմական աղբիւրաց օգնութեամբ Ս. Մեսրովբայ տոհմի ծագումն և Տանուտէրական պատինն։ Ուստի մեզ նպատակ դրած ենք ապացուցանել թէ Ս. Մեսրովբ պատկանում է Հայկեան շրջանի մեծ նախարարական ցեղի, թէ նորա տոհմը ազգակից էր Արշակունի թագաւորաց, և մերձաւոր արենակից Ս. Սահակայ, թէ Հացեաց գիւղն սեփականութիւն էր Վահեուհեաց տոհմին, ուստի էր հարձն՝ որ ըստ Բուզանդայ՝ ծնաւ որդի մի Վրիկ անուն, մօր կողմէն թոռն Տիրան թագաւորին, և թէ այս Վրիկ նոյն է Վարդանայ հետ, որ սեփականատէր էր կարճագատաց (կամ Հարճագատաց) գիւղին և հայր Ս. Մեսրովբայ։

Աղբարե գործ դժուարին և անհաւատալի, քան սաւառնակի մը կամ ջրասուզակի գիւտն, և չենք տածեր անքան յանդգնութիւն ոչ յանչափայ յօդ բարձրանալու և ոչ ի խորս մխրճելու, այլ հաստատուն գետնի վրայ նստած պիտի փորձենք երկու ամուլ քարեր իրարու շփել, գուցէ կայծ մի ցայտէ և նշոյլ արձակէ այն բազմադարեան խաւարի մէջ, որ կը ծածկէ այդ գաղափարական հորիզոնն³։

Իբրեւ աղբիւր վարուց Մեսրովբի, յիշուած է նաև Սոփերքի Ա. հտ. «Պատմութիւն վասն սրբոյն Սահակայ Հայրապետին և Մեսրովբայ Վարդապետին»։ Սակայն հարեանցի մի ակնարկ բաւական է հասկանալու այդ ճառագրութեան արժէքն առաջարկեալ հարցի մէջ։ Համաձայնելով այլ բանասիրաց կարծեաց, նաև ըստ մեր տկար տեսութեան, ոչ մի պատմական կարեւորութիւն չունի և ոչ համեմատելի կորեան պատմութեան հետ, թող թէ՛ նորան վերագրել։ Յետին դարերու գործ է, մի ներդրեան յերկրուած մեր չորս պատմիչներու գործերուց։

1. Կորին... Անդ։

2. Առն զոր ի նախակարգ բանիս նշանակեմք վասն որոյ փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշտոց անուն, ի Տարօնական գաւառէն ի Հացեկաց գիւղէն, որդի անն երանելոյ Վարդան կոչեցելոյ։ Անդ։

3. Կանխեմ ասել որ մի զոգացուցիչ եզրակացութեան զաւու համար, ուշ դարձուցինք նաև մեր երկու նոյն ժամանակի պատմիչներու գրածներու վերայ, Ղազար Փարպեցուն և Մովսէս Խորենացուն, որք զժողովարար այնքան բան կ'ասեն, ինչ որ վրած է Կորին։ Եր ուրի տարբերութիւնն յայտ է որ, Փարպեցին հետեւած է Կորինին պաշնելով Մաշտոց անունն, ի բաց առեալ Սահակին վերագրածն և Խորենացու ներմուծուած զխէն. իսկ Խորենացին մանրամասնութեանց մէջ թէթև չեղումներ ունի, և որ դիտելին է, անտես արած Մաշտոց կոչումն, անոր սեղ գործածում է Մեսրովբ (կամ Մեսրովբ)։ Մենք այս վերջին ձևն նախընտրել կը համարինք։ Անշուշտ սա ունեւնալու է իւր իրաւացի պատճառք, զոր յետոյ պիտի տեսնենք։

Միջին դարերու գրիչ լինելն՝ երեմիական ոճէն յայտնի է, աւել-
րանաց և արշաւանքներու դարու մարդ է. ինչպէս են մեր Է—Թ դարերու
ողբերգակ պատմիչներն։ Սա ևս անկախ իշխանութեան և ինքնազուլի
Աթոռոյ զաղափարն կորուսած, սրտառու յիշատակաւ Միածնաէջ
կաթողիկէին, աչքերն դէպ ի Սիրոնն կը դարձունէ, այն Սիրոնն զոր
ողբային Սաղիմայ որդիքն բարեկացւոց գետեզերքներու վրայ։

Եօթներորդ դարուն մէջ Հայոց Սիրոնն եղաւ Քարուղաշտի Զուարթ-
նոց Եկեղեցին՝, որ հայ մտքի մէջ հաւասար էր Սողոմոնեան Տաճա-
րին, մանաւանդ աւելի իմն գերազանց։

Հուսկ ուրեմն ամեն տարակոյս կը փարատի, ի նկատի առնելով
որ Կորեան «Մշտոց» կոչումն չունի, այլ իւր յատուկ «Մեարոյ».
և ապա նոյն ինքն կ'ուղարկէ զԵնթերցողն առ Կորիւն՝, «կատարեալ
պատմութիւնն» զայն կոչելով։

Ուզած ենք օգտուիլ նաև Զենոք Գլակէն։ Որքան և մեր ողբացեալ
վաղեմի բարեկամն Գր. Խալաթեան զայս յետին դարերու զործ ցոյց
տուաւ, սակայն մեզ համար խմբագրութիւնն չէ կարևոր, այլ խմբա-
գրուածն, որոյ հում նիւթերն կանուխն կային ցիր և ցան Գլակայ
վանքի և այլ վանքերից, Ծոփաց և այլն, փոշոտ դիւաններու մէջ և
իններորդ դարու կամ աւելի ուշ խմբագրողն, չմտաբերելով Խ. դարու
քննադատները, համեմեր է իւր խմբագրութիւն նաև յետին դարու յի-
շատակարաններով, որով հեղինակութիւնն նուազած։

Մեզ հետաքրքրողն նախապէս ժամանակագրական կարգն չէ, այլ
ժամանակագրուածն, իրն և պատմութիւնն, որ կայ և խօսի. անծանօ-
թին ոչ որ ցանկայ, եղած է մի պատմութիւն որ և գրուած է. սա-
կայն պէտք չէ ակնհայտ մեզի և թէ իւր տեղը չգտնենք. ինչպէս մի
հոյակապ շինութեան բեկորներ որոնք ազուցուած են մի յետագայ
շինութեան մէջ, որոց ուսումնասիրութեամբ կարելի է վերականգնել
հինն, առանց խախտելու կամ արհամարհելու նոր շինուածքն։

Այսչափ են մեր անգրանիկ պատմագիրքը, որք չափազանց աղքատ են
Մեարոյայ կենսագրականին նկատմամբ. և եթէ աւանդաբար տրուած
ըրջանակի մէջ մնանք, ոչ մի նորութիւն, ոչ մի լուսարանութիւն չենք
կարող տալ ընթերցասիրաց, վասն զի անխորանելի կը մնան այն
հարցերն որք Ս. Մեարոյայ անձնաւորութեան շուրջն կը բոլորին,
թէ ուստի՞ էր ծագումն, ի՞նչ ազգից և որպիսի՞ ըրջանի մէջ ապրած ի
մանկութենէն, մինչև նորա երևալը Հայաստանի բեմի վրայ իբրև Ու-
սուցող Հայոց ազգին։

Ս. Մեարոյայ նախնիքն գտնելու համար, հարկ համարիմ շուշա-
փել փոքու իւրից Հայ ազգի ծագումն։

Արևելասիրաց պատմական հետազոտութիւնը ապացուցած են որ
նախապատմական ժամանակներ Արևելքէն մի գաղթականութեան հո-

1. Հաւանորէն կառուցուած էր Անտիոքայ մէջ Կոստանդինոսի շինել տուած կաթողիկէին
կամ մի այլ Հռովմէական շէքիմ (Mausolée) հետեղութեամբ։

2. Այսպիսիք էին վարք երանելեացն, Ս. Սալկայ և Մեծին Մեարոյայ, և այսպիսի
քաղաքավարութիւն նոցա, մանաւանդ թէ և առաւել քան զայն զոր գրեալ է (Կորիւն) ի կատա-
րեալ պատմութեան նորա (Սոփ. հտ. Ա. 37)։

սանք անցաւ տարածուեցաւ, մինչև Եւրոպիոյ արևմտեան սահմաններն¹։

Ույն գաղթականութեանց միջոց առանձին ընտանիքներ հաստատուեցան նաև Հայաստանի մէջ։ Այս արիական գաղութն, իւր թողած երկրի նմանը գտնելով նոր գաղթավայրում, վերջնոյս սարերն և գետերն տարբեր անունով չափտի կոչէր, այլ այն ինչ որ սիրելի էր իւր սրտին՝ Մասիսն, Արարատն, Արագածն, Երասխն, Արածանին և Տիգրիսն և գաւառներն, Տոբն, Տուրուբերան, Տարօնն և Այրարատեան աշխարհն։ Եւ բերէին իրենց հետ նաև պաշտած աստուածն, Արևն և նորա պաշտամունքն. վահագն՝ կեանք և լոյս, Դեմետր՝ երկրագործութիւն և ոյժ, Գիսանէս բժշկութիւն և բնագիտութիւն, միով բանիւ Մոգաց գիտութիւնն, վարդապետութիւնն և կրօնքն, հաստատելով յԱրմաւիր, յԱշտիշատ, Բագարան և յԱնի ևն. Ս. Գիրքն իբրև հնագոյն պատմական յիշատակարան, Եփրատական ամենայն գիտութեանց վարժուած Մովսէսի գրչէն ելած, կը հաւաստէ այս արևելքից եկած գաղթականութեանց որք հաստատուեցան Հայաստանի մէջ²։ Համաձայն արտաքին և Ս. Գրոց պատմածներուն, ունի նաև մեր Պատմահայրն Խորենացի զրած արևելքէն եկած գաղթականութեանց մասին, յառաջ քան Հայկայ գալուստն³։ Ուստի՞ գտեր է մեր ծերունին 15 դար առաջ իւր պատմութեան աղբիւրն, յիշեալիմ թէ յԱղեքսանդրիա՝ Բագմովիպէն իբր Համայնագիտական մի մատենանէ, և որոյ պատմութեան ինքն կը հաստատէ իւր ժամանակի անգիր գրոյցներով, որ աւանդաբար անցեր էին բերնէ բերան, սերունդէ սերունդ, ամեն մի նախարարական ցեղի, տոհմի և տան մէջ։

Խորենացու յարգն ըստ ինքեան պէտք էր արժանապէս գնահատուիլ, երբ մեր օրեր բեհագորոց ընթերցումն ամբողջական պատմութեան ձևով սկսաւ նկարագրել հարաւէն նախապատմական ժողովրդեան մը յառաջ խաղացումն Հայաստանի հողի վրայ, զրեթէ բառացի նոյնութեամբ, ինչ որ արդէն զրած է Խորենացի, որով Հայկ և իւր սեւրունդն մեկնելով Բաբելոնէ, Տիգրիսի ուղղութեամբ, Սղերդի գետափէն և ձորերէն բարձրանալով՝ Բաղիշու մօտով կ'իջնէ Տարօն և անտի ի Հարք՝ թողլով ի հարաւ զՏարօն Հայկ և իւր յաջորդներն խաղաղ տիրապետութեամբ բնիկներու վերայ կը տարածուին հաւասարապէս դէպ ի վան, մինչև ի Կապադովկիա և Կովկասու սարերու ստորոտներն։ Բայ ի թագաւորաց անուններէ, որոշ կերպով կը տեսնուի որ բեհագետ, միշտ աչքերնին Խորենացու վրայ պահեր են աշխարհագրական տեղերու անուններ ընթերցած ժամանակ, և քայլ առ քայլ

1. Այս միւս եւ կարծիք ոչ անհասանական, արևմտեան կողմէն մի գաղթականութիւն մտեր է Հայաստան այլեայլ անուան տակ, Թրակեան, Փոնդեան կամ Հաթեան կոչուած։

2. Ամենեքեան սոցա որդիք յԵկատան և եղև բնակութիւն նոցա ի Մասիաց մինչև ի գալ Սովինիայ լեռոն Արևելեայց (Երևոյ. Ժ. 30)։ Եւ էր ամենայն երկրի լեզու մի և բարբառ մի ամենեքեան, եւ եղև ի խաղալն նոցա յարեւելից՝ գտին դաշտ մի յերկրին Սինասար և բնակեցան անդ (Երևոյ. ԺԱ. 1, 2)։

3. Հայկ... յիշի և աստանոր պատմութիւնս հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ առ երկայնանտիւ միով լեռամբ բնակեալ յառաջագոյն արք սակաւք՝ ինքնակամ հազանգիւղի դեպքերն։ Աղագրացուցան է այս զասացեալ զըրոյցս անգիրս։

հետևում են Խորենացու գծած շաւղին: Որքան և փոքր լինի Խորենացու սփռած լոյսն, սակայն չի կորցնէր իւր նշանակութիւնն:

Այսպէս ուրեմն նախապատմական շրջանին պատկանող բնիկներն, որոնք կարող էին պարծիլ իբր անմիջական սերունդ և պայազատներ Նոյի կամ Քահսութրայ, զրեթէ ամբողջովին զրանցին զԲուն՝ Հայաստանը: Այդ բնիկներն երեք զլիսուր կեդրոն բռնած էին. Այրարատեան, Բարձր Հայք և Տուրուքերան աշխարհներն: Նախապատու էր Այրարատեան Տունն, Երկրորդ տեղին ունէր Բարձր Հայոց Անգեղ Տունն, Երրորդն Տուրուքերանի՝ Աշտիշատու տան ցեղապետն, և երեքն ի միասին Մեծ Հայք կոչուեցան՝, Նոյ եղաւ առաջին քրմապետն և զոհագործողն, որով իւր որդիք ժառանգեցին այդ պաշտօնն և մի քանի կեդրոններում հաստատած էին իրանց մեհնատեղիքն յԱրմաւիր, ի Բագարան, յԱնի, և ի Տարօն՝ յԱշտիշատ:

Այրարատեան գաղութն զերիշխանութիւն բանեցուց միւս տների վրայ և համարուեցաւ կեդրոն ազգային իշխանութեան և միութեան. ուստի Ասորեստանի միապետներու դէմ մղուած կռիւներու մէջ՝ միաբերւ խապետ կը ներկայանայ Այրարատեան աշխարհի իշխանն, որու պարտութեամբ Հայաստան կը դառնայ մի նուաճուած երկիր:

Եւ որքան մեծ է Խորենացու հրճուանքն երբ մեր Պարոյր Նախարարն Վարդակէսի օգնութեամբ, Թօթափելով Քաղղեացուց լուծն, անկախ իշխանութիւն մի կը հաստատէ Հայաստանի մէջ²:

Պարոյրի յաջորդներն իբրև հարկատու թագաւորներ պայազատեցին մինչև ցՏիգրան Մեծն, որ Կիւրոսի շնորհիւ՝ Թուրի անկախ իշխանութիւն մը ձեռք բերած. նորա օրով երջանիկ եղած է Հայաստանն երկիր. Տիգրանը Հայոց Սողոմոնն եղած է: Ու կը թողու երեք որդիք, Բար, Տիրան, Վահագն: Անուններ որոնք նախնարար դիպարունարեան պատկանած են և առարկայ եղած կրօնական պաշտամանց, իբրև Արեւի մարմնացումն. յետոյ նաև քրմերու անուններ՝ իբր Արեւի պաշտաման նուիրուածներ:

Վահագն քաջագոյնն և ուժեղագոյնն եղբարց մէջ կը յափշտակէ Թագաւորական և քրմական՝ զաւագանն իւր եղբայրներէն, բնաջինջ անելով իւր եղբայրների սերունդն, որոյ համար և կոչուած է Վիշապաքաղ՝, այսինքն Թագաւորազարմի սատակիչ:

Վահագն իւր ցեղին սեփականելով Թագաւորական և քրմական բարձրագոյն պատիւներն՝ նշանակեց իւր որդիքը իբր քրմապետ զԼաւոր մեհնատեղեանց վրայ. Բագատ (կամ Բագարատ) Անգեղ տան յԱնի, իսկ Վահէն Տոսպայ և Տուրուքերանի և Տարօնոյ Աշտիշատու մեհնատեղեանց, կրելով միանգամայն Թագաւորական թագն, որով

1. Այս սեղանն չի բացասեր Ֆազած աշխարհներն:

2. Եւ այժմ աւազուածացայ ոչ փոքր ինչ կրելով ինդոլիւն, հասանելով ի տեղիս մերում իսկ բնիկ նախնայ, յորում սերունդը Թագաւորութեան հասանն յատենան (Խոր. Ա. ԻԱ. 99):

3. Քուր-Մական, Սուրբ գաւազան քահանայական կամ աստուածապետական. Բէ է ոչ հրաշափորտ, այլ նոյնքան զգրաւոր որդէս Մոսիսէսին:

4. Յետ որոյ և ընդ վիշապաց աւէին յերգն կոռել նմա և յաղթել... Խոր. զերթ Ա. ԴԷ. Ա. Արթ. էջ 606.

Աշտիշատն թագաւորաց Հայոց կրօնական պաշտամանց կեդրոն դարձաւ, նսեմացնելով Արմաւիրի և Բագարանի մեհեաններն՝ վաճէ՝ Դարեհի պարտութենէ յետոյ, կ'իյնկնայ Մակեդոնական իշխանութեան ներքեւ, կորցնելով անկախ թագաւորի թագն և զաւագանն:

Մակեդոնական տիրապետութեան շրջանի մէջ, Հայ իշխաններ իբրեւ Կուսակալներ կառավարեցին գերկիր, որոնք պատկանելով այլ և այլ նախարարական տներու, կը ջանային ապահովել իրենց տան համար իշխանական տիրապետութիւնն, որով Հայաստան շարունակ շփու թից և խռովութեան մէջ էր՝ Բայց տարակոյս չկայ որ առանձին կերպով հաւածուած էին թագակապ իշխանազունք Այրարատեան Նախարարութեան, և ազդեցիկներ փախստական զնացեր էին Պարթև թագաւորաց արքունիքն, ուր ապաստան կը գտնէին իբրեւ առ իւրեանց ցեղակից և կրօնակից Նախապատմական ժամանակներուց:

Խորենացու միին խօսքերու մէջ դեռ կարելի է բաւական բացորոշ կերպով նշմարել որ Վաղարշակ յառաջ քան Մեծին Արշակայ Նշկահումն և պատերազմն ընդդէմ Մակեդոնացւոց, ծառայութեան մէջ էր արդէն ի դրան արքունի¹, անշուշտ իբր թագակիր իշխան Հայկազուն զարմէ: Սա տեղեակ լինելով Արշակայ աշխարհակալական խորհուրդնեւրուն, ուզած է օգտուիլ, խոստանալով իւր և իւրայոց աջակցութիւնն ի մարտի ընդդէմ Մակեդոնացւոց, պայման դնելով անշուշտ Հայաստանի թագաւորութեան վերականգնումն: Վաղարշակ՝ Բագարատ իշխանի հետ, որ Թերեւս Կուսակալութեան պաշտօնով կը տիրէր մի մասին Հայոց, «ի ծայրս հայերէն խօսից», համախորհուրդ եղած է ապստամբութեանն և զհայս անցնելու ի կողմն Պարթևաց: Արշակ Մեծն Վարապէսի խորագիտութեամբ թագ կապէ Վաղարշակին և իրեն սերտ սիրոյն նշան, և կորայոյրեան Պատիւով² փոխէ անունն ի Վաղարշակ (Բահլ-Արշակ) խառնելով իբր յիւր ազգակցութիւն: Իսկ Բագարատին՝ իշ

1. Յայտնեալ մինչև ցիթագաւորութիւն Վաղարշակայ ի Հայս՝ ոչինչ ճշմարտագոյն ու նիւ պատմել քեզ. քանզի շփութ ինն ամբոյից լծալ, այր զարամբ եւանէին տիրել աշխարհին. (Խոր. Ա. Ա. 127):

2. Դիմելի այս Բագարատ նախածին ընծայ ըստ կամաց մատոյց գինն Վաղարշակայ յառաջ քան զպատերազմն Արշակայ ընդ Մակեդոնացիս և սա ի դրան արքունի, իսկ ի ծայրս հայերէն խօսից կողմնակալ իշխան ըրեւոց և հազարաց յարմարից կուտ: (Խոր. գիրք Գ. Գ. Գ.): Դիմել Կուսանց որ այս պարբերութիւնը իբր փակցի՝] մէջ ասուած ծանօթութիւն է: «միջդեռ «Իսկ ի ծայրս» պէտք է համարել շարունակութիւն «որ և այժմ մեծ նախարարութիւն ի մէջ աշխարհիս» քի եայլն. որ ճշդիւ Բագարատեանց յանձնուած էր Արշակունի թագաւորներէն: «Սա» չի կարող վերաբերիլ առ Բագարատ քանզի Վաղարշակի կուս սկսած ժամանակ նա դեռ Մակեդոնացւոց իշխանութեան տակն էր: Ամբողջական իմաստն կը պահանջէ «և» ը ուղղել «էր»:

3. Վասն քննութեան եղբայրութեան ազգաստե՞մին.... քան ընդ տէրութիւն իւրեանց ազգաստե՞մին և իղբայրութիւնմ (Ագաթ. էջ 31-32) որպէս թէ ըստ մտաց Հռոմէական ազատագրելոց, որք նոյն իշխանի ազգաստե՞մին անուամբ կը կոչուէին - Այսպէս նաև Հայկազունի իշխանն կը կոչուի Արշակունի, Արշակունի կոչումն յատկապէս չի նշանակեր նաև ցեղի մը աղանակութիւն, այլ իբր մակդիրի մը որ կարելի է հրեմնի գեղջի կամ ընդարձակել, Այլ մտքով Ս. Սահակ Հրաշատ Կաթողիկոսի որդւոյ համար միջնորդելով Վաղարշի կը ինչդիւ, եթէ չկամին արշակունի անունը տալ, զանէ միւս նախարարներու կարգն անցին. «Եւ միւս եւ զի դարձուցէ զառն ազգականն իմոյ և քո, զմանկանն Կաթողիկոսի որդւոյն Հրաշատայ թէ և ոչ իւրեմ հազ, զարշակութիւնմ յաշտելով անուն, զէթ ի կարգ ընկեցեալ՝ ընդ այլ նախարարսն Թուեցիք» (Խոր. գիրք Գ. Գ. ԿԵ.): Նոյնպէս Արտաշէր Պարթևի մեր Արտաշէս վերջնոյն անունն ևս կը փոխէ Արտաշէր իբրիս որդւոյ նշան. (Խորենացի Այդ):

խանին Անգեղ Տան, խոստանան կարգել Առաջին իշխան Հայոց և Մալխազ¹ և ընդ նմին տան թագազիր Ասպետ լինելու աստիճանն և պատիւն²։ այնպիսի արտօնութեամբ որ ոչ ոք Արշակունի օրինաւոր թագաւոր համարուի առանց ազգին Բագրատունեաց։

Այսպիսի պայմանագրութիւն եղած լինելու է Արշակայ արքունիքում, որով տուած է իւր իշխանութեամբն ոյժ և հաստատութիւն երկու իշխաններ ի մէջ կռած դաշինն։ ապա թէ ոչ անհասկանալի կը փնայ թէ ինչպէս Վաղարշակ Զան զիւր իշխանութիւնն աւելի բարձր իրաւունք և իշխանութիւն կրնայ շնորհել Բագրատունի Ասպետին, այսինքն առանց անոր հաւանութեան օրինաւոր թագաւոր չճանչցուի Հայոց³։

Եթէ Այրարատեան Արշակունիք, չլինէին Հայկական զարմէ և ի նախնեաց որդոց որդի տիրապետող և ապա թագաւոր իշխաններ Հայաստանի, յառաջ քան Մակեդոնացոց տիրապետութիւնն, մեր չորրորդ և հինգերորդ դարու պատմագիրք, ամեն մի արշակունի յիշելիս, չէին ասեր — Բնիկ, Բնուկ, ի Բուն, ի Բնմէ և այլն տերուց, սրանց Տսնե Արշակունեաց։ Վերջին կոչումովս թագաւորական պատուոյ հետ կ'իմա նային նաև ի զարմից հայկազանց լինելն, նա մանաւանդ որ Խորենացի յիշելով յառաջագոյն բնակուած լինելը Հայաստանի, Հայկայ համար կը գրէ. «Բնկին մերոյ նախնոյն Հայկայ»⁴։

Նմանապէս Վաղարշակայ արտաբոյ կարգի ուշադրութիւնն առ Բագրատունիս, կը յայտնէ նախ այդ ցեղի ունեցած ոյժն և հեղինակութիւնն երկրի մէջ, երկրորդ ազգակցական կապն⁵ որով Բագրատ, մինչ Վաղարշակ Արշակայ մեծի արքունիքումն էր, յառաջ քան ապստամբութիւնն, կը կանխէ յառաջագոյն անձնատուր կը լինի թագաւորեցնելու զՎաղարշակ որ թագաւորական տան ուղիղ գծից իջած էր⁶։

Այսպէս ուրեմն Խորենացու Պատմութիւնն առած յանգիր Զորոյցներէ, և յերկոց Վիպասանաց և ի Թուեւեաց⁷ և յազգային դիւանաց, ուր⁸ ասէ Պատմահայրն «ամբա զորոցաց զոն մատուներ» որպէս և հաւուկոտորք Անանուհ զբրին, կու գան հաստատելու Արշակունեաց, Բագրատունեաց և Վահուկեաց մի և նոյն արմատէն բխեալ երեք մեծամեծ ճիւղեր լինելը, որոնք ուղիղ գծով կ'իջնեն Վահագնի որդիքներէ, սոքա իրանց մէջ րաժանեցին արքայական թագն, Քրմական մականն և Հայրութիւն, այսինքն թագաւապ ասպետութիւնն⁹։

1. Թուի այս բառի զենտէ Մալէ-Խիզան իւր Տուն աղջկանց (?) կամ Ներքինպետ։ Մարդպետ։

2. Ըստ Գառնամակի Ս. Սահակայ։

3. Որ թագաւորն թագակազն լեւալ էին ի Բմմէ ազգին թագաւորութեանն Արշակունեաց, (Բուզ. Դպ. Ե. ԳԼ. ԽԴ)։

4. Սրանչէլի ինն ասէ պատմագիրն թէ ի յուր տեղիս գտան բնակեալ ի մարդկանէ յերկրիս մերում ցան և ցիր սակաւց յառաջ քան զգաւուսս բնկին մերոյ նախնոյն Հայկայ։ (Խոր. Ա. ԺԲ. 62)։

5. Եւ զերեցեալն Բագրատ... մասն յառաջագոյն անձնատուր ձեռնտութեան առ թագաւոր... զյառաջասացեալ Տանուէրական պատիւն ազգին պարգեւով։ (Խոր. Բ. 156)։

6. Զորոց — Legendes — Երգ վիպասանական Poeme Epique — Երգ Թուեւեաց Poésie Didactique.

7. Այսուհետև մեզի դիւրին պիտի լինի հասկանալ այն ծածկեալ պատճառն, որով Քրիստոնէական շրջանի մէջ թագաւորական Տունն և Քահանայապետական համապատիւ համարուած էին և սերտ կապով միացած և նոր խնամութեամբ կ'ամրապնդէին զայն։

Վաղարշակ՝ Բագարատ իշխանի աջակցութեամբ վերականգնելով հայկական թագաւորութիւնը, բնական է որ առաջին մտածութիւնն պիտի լինէր բարեկարգելու զերկիրն և վերանորոգել առաջին կարգերն՝ որոնք խախտած էին Մակեդոնական տիրապետութեան ժամանակ: Բարեկարգութեանց սկիզբն եղաւ Նախարարական տներու իրենց բնական կարգին վերածելն, որ յարձ կոչուէր, երբ ըստ աւագութեան և ազնուութեան թագաւորի տաճարին մէջ բազմէին իւրաքանչիւրն յիւր տեղին կամ ի բարձին: Կը տեսնենք որ Նախապատուութիւնն կը ստանան այն տներն որոնք ուղղակի Հայկայ սերունդ ճանաչուած են, որպէս Բագրատունին, Սիսակեանն, Խորխոռունին, Մանաւազեանն, (Մուրացեան) և այլն. բայց Վաղարշակին մերձաւորագոյն էին Վահագնի սերունդէն իջած տներն: Սոքա ոչ միայն Աւագ կոչուած Նախարարներու կարգն կը մտնեն, այլ Վաղարշակ աւելի իմն ուզելով պատուել զիւր ազգակիցներն, անոնց կը պարգևէ Քրմապետութիւնն¹, և անուն կոչէ Վառնիս:

Հ. Գ. Վ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Շարայարելի

1. Բայց յորդոցն Վահագնի գտեալ արս, որք ինքնակամ խնդրեցին զմենեկից պաշտամունս, պատուէ մեծապէս, ի ծեռս մոգա տալով գործութիւնս, և կարգէ ընդ առաջին Նախարարութիւնս. (Խոր. Բ. ԳԼ. Ը. 172):

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ¹ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ

ՊՈՏՄԱԿԱՆ ԶԱՐԳՈՅՈՒՄԸ

Քառասնորդական պալլքը եւ Աւագ շաւիթը

Քառասուն օրուան մեծ պահքի մը յիշատակութիւնը առաջին անգամ ունինք Նիկիոյ ժողովքին (325) հինգերորդ կանոնին մէջ: Այս մեծ կոչումը՝ երկար տևողութեան և Զատիկի պատրաստութիւն մ'ըլլալուն համար էր: Որքան որ ժողովքին այս յիշատակութիւնը հնութիւն մը կու տայ այդ պահքին, սակայն եկեղեցիէ եկեղեցի պահքի օրերու սահմանը կը տարբերէր. ոմանք մէկ կամ երկու օր կը պահէին, այլք քառասուն ժամ, սովորաւ:

բար Զատիկի նախընթաց չորեքշաբթիէն կը սկսէին:

Կ'երևի որ Հայոց մէջ կանուխէն մտած է քառասնորդական պահքը աղոսիացի խիստ օրէնքներով, որովհետեւ Գրոց գիւտին հետ Ս. Մեսրոպ պատմէօրեայ Հարցերը կու տար Հայ եկեղեցւոյ որ իւր փրկագործութեան յիշատակը կը տօնախմբէր խրայէլեան երեք մակկահց հնոցին վերջիշումով: Հրէական ազդեցութեան վերջին հետեւերն էին Եկեղեցւոյ մէջ, որ հնոցին նման երթալով կը մարէր փրկագործութեան օրերուն մօտենալովը:

Եւ ահա Աւագ շաբաթը զրական արածանիքով էջ մը կը բանայ մեր առջեւ: Երգեր՝ ուր հակադրութիւնը յօրինուածութեան հոգին կը կազմէ, գաղափարներու վեհութիւնը՝ բանաստեղծական նուրբ թըռիչքներով կ'արաայայտուին... Աստուածային ողբերգութեան մը ցուցադրութիւնն է, ամենայաջող արտայայտութիւն մարդ-

1. Տես Բագմավեպ 1913, էջ 417.